

ՍԱՌՑԻ ԿՐԱ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՄՍՏԱ
ԵՐԱՊՈՒԼԱՆԻՍ
Բնագիտական
ՀԵՏԵՐ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1928

891.710
Ա-43

30 MAY 2011

U-43

Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻԶ

ሀ ለ ቤ ያ ኮ ሂ ገ ሠ

Թալիզմ, ԽՆԿՈ-ԱՊԵՐ

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1928

59298-66

891-7/15 Ute p. 8/15
4-43 | Ute p. 8/15

n-209	11/5-80
-------	---------

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԽՐԱՄԱԴՐԵԼ Ե Գ. Ֆ. ՄԻՐԻՄԱՆՈՎԻ ՀՐԱՄԱՐԱԿՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ



59298-66

Заказ № 805. Тираж 3000. Главлит 98315.

ሀ ሄ ቡ ያ ኮ ሂ ሶ ሄ

I

Փետրավորը թուխ-կապտավուն ամպերը իսկ և իսկ ահաբեկված թռչունների կտրտված յերամի պես անցնում են ծովի վրայով: Ով-կիանոսի թափանցող սուր քամին—կամ դարձնում է նրանց մի մթին միապաղաղ զանգված, կամ ասես խաղալով կտրատում է և հայածում, տալով նրանց տարորինակ ձևեր:

Փրփրեւ ե ծովը, աղմկում ե քամուց: Ծանր բարձրանում են արձիճե ջրերը ե փրփուր հագած մի խուլ շառաշով գլորվում են դեպի մթին հեռուն: Քամին գազազած անցնում ե այդ ջրերի յերեսով՝ հեռու տանելով նրանց ցալքունները: Իսկ ափի յերկարությամբ մի վիթխարի լեռնաշղթայի պես բարձրանում ե ավազի վրա սառցի սպիտակ ատաճնավոր կիտվածքը: Կարծես թե աժդահաներն են իրար հետ մրցելիս շարտել այդ վիթխարի բեկորները: Թեք գառիվայրերով ծովափնյա բարձրությունների վրա բուսած անտառը մռայլ շարժվում ե դեպի ծովը: Քամին վզգում ե դարավոր յեղևներին կարմրագույն բուսների մեջ, ծռում ե ուղղաձիգ չինարիները, որորում նրանց սուր գագաթները ե տխուր գլուխները կախած կանաչ ճյուղքերի վրայից թափում թավոտ ձյունը: Զուսպ սպառնալիքը տխուր լսվում ե այդ միաշափ խուլ աղմուկում, ե լուռ վիշտն ե փչում վայրի ամայությունից: Անհետք անցնում են ալեհեր դարերը լուռ յերկրի վրայով. խիտ անտառը կանգնած ե հանգիստ, մռայլ, խոր մտքի տակ ընկած՝ որորում ե իր գլուխը: Դեռ վոչ մի հզոր բուն չի ընկել ազան փայտավաճառի հանդուգն կացնի տակ: Ճոճերը ե անանցանելի ճահիճները պառկել են նրա մութ գրկում: Իսկ այնտեղ, վորտեղ դարավոր յեղևները դարձել են մանր մացառուտներ՝ ձգվում ե մեռած ամայի ընդարձակությունը ե կորչում գետնատարած մշուշի անսահմանության մեջ:

Հարյուրավոր վերստերի վրա վոչ յուրտ կա, վոչ ծուխ կա, վոչ մի մարդկային հետք: Միայն քամին է պտտում չարագուշակ, և ել անխոս մառախուղն է ցածլիկ-ցածլիկ սողում ձյան անապատի յերեսով: Տարին մի անգամ է այստեղ մտնում անհանգիստ մարդը, խանգարելով մուսյլ ամայությունը վայրի ծովափի:

Ամեն անգամ, հենց վոր խփում է զարհուրելի սառնամանիքը և բանում է հաստատուն ճանապարհներ ճահճային տափաստաններում, իսկ ծովի վրա յեւ մշուշապատ հեռուներում նկարվում են անկանոն ձևերը բեռային սառույցների, վոր առաջ են շարժվում ովկիանոսից, Մեզենի հեռավոր ափերից և ծովափնյա գյուղերից, այդ ժամանակ ճահճային տեղերով, հին անտառի և սառած ձյան միջով ձգվում է բեռնակիր ինքնատիպ սալաշարք: Ճյուղավորված մանրիկ պոզերով հյուսիսային յեղջերուները, լծված յերկար սև նավակներին, շարքով գնում են իրար յետևից՝ զգուշությամբ վոտները փոխելով:

Յեւ մուսյլ տհաճությամբ հին անտառը տեսնում է, թե ինչպես իր միջով մի քանի վերստ յերկարությամբ, բանակի պես, ձգվում են անկոչ հյուրերը:

II

Կանգնել է «Կաչաղակը» սառցի կտորի վրա, ձեռքերում բռնած ձուկ վորսալու բազորը, և ուշի-ուշով նայում է հեռուն: Իսկ այնտեղ, համարյա հորիզոնի ծայրին, մշուշային սառնամանիքի միջից զատվում են և աճում անկանոն ձևերով սպիտակ սառցակույտերը: Կաչաղակը քննել էր կտրել լարված սպասողության մեջ: Բոլոր նշանները կային, վոր գործն սկսվելու յե. թռչունը կռվում է, ծովի յերեսից դեպի քամին է թռչում, և գիծ քամին բարձրացավ: Մառախուղը սողում է իսկական գետնի վրայով, յեղևներին զազաթներին է կպչում. անտառն աղաղակեց: Այո, պետք է ընկնել ձկնակայանը: Յեւ նա աչալուրջ նայում էր դեպի սառը հեռուն, աշխատում էր վորոշել՝ արդյոք վորս կմ: Ծովի վրայով անցնում է մեզ-մշուշը. աչքը չի վորոշում:

Որը գնաց: Քամին շառաչում էր անտառում և պտտում փոշիացած ձյունը: Ամեն տեղ սողում էր գորշ ձմերային մութը: Այս-



Կանգնել է «Կաչաղակը» սառցի կտորի վրա...



տեղ ու այնտեղ խոշոր սառցակույտերի յետևից յերևում եյին մագոտ, սպիտակ ձևեր՝ յերկար բազորները ձեռքերում, և նայում եյին մշուշոտ հեռուն։ Ծովը խուլ աղմկում էր։ Հեռուն տձև, անորոշ առաջ եր շարժվում՝ սպիտակ կուրծքը դեմ արած դեպի ահագին սառցակույտը։

Կաշաղակը նայեց ափին, տեսնում է, վոր հարևան սառցակույտի յետևը կանգնած է իր բազորով «Ագռավը»։ Նայեց նրա վրա Կաշաղակը, և մթնեց նրա հոգին։ Առողջ գյուղացի Ագռավը, հագին յեղջերուի մորթուց սովիկը*, վտաններին նոր բաֆիլներ։ Կանգնել է իր համար թեթև հենված բազորին և նայում է ծովին. յերևում է, վոր փոշման չի։ Հույս ունի, կընկնի ձկնակայան։ Ագռավը նոր շխուռնա** կզցի ջուրը, ել ավելի լավ վորս կանի, տեղ ել չհասնի՝ պետքը չի, դարդ չի անում այդ մասին։

Այո, ինքը, Ագռավը ել, ձկան գործում իրեն այնքան նեղություն տվողը չեր։ Նրա համար վարձու ձկնորսները շատ վորս կբերեն։ Կաշաղակն ել նրա շալակտար ձկնորսն եր, վորովհետև Ագռավը նրան տաք հագուստ եր տվել, վոր փոխարենն ստանա նրանից վորսի կեսը։


Քամին աղմկեց. պատռեց մշուշը և լքեց տարավ անկյանը մառախուղը։ Նայեց Կաշաղակը, վեր թռավ տեղիցը։ Մոռացավ և Ագռավին, և՛ նրա հագցրած սովիկը, և՛ իր դժգոհությունը նրանից, մոռացավ և այն, վոր ինքը տալու յեր նրան վորսի կեսը, մոռացավ Կաշաղակը ամեն ինչ և սուր աչքերն ուղղեց դեպի լուսացող հեռուն։

Իսկ այնտեղ, վորքան աչքն եր կտրում, ձգվում եր, շարժվելով դեպի ափը, փորփրած, ակոսած սառցադաշտը։ Ահագին կապտագույն սառցի կտորները կամացուկ բարձրանում եյին և շառաչով փուլ եյին գալիս տակից զարկող ջրի ճնշումից։ Ծանր կուտակվում եյին սառցադաշտերը, գոռում-գոչյունը գնում եր նրանց հետ։ Դա—ծովի ալեկոծության նման չեր, ասես սաստիկ փոթորկի դղրդոց լիներ։

Կաշաղակը տեսնում է, հազիվ աչքը նշմարում է սև բծերի նման թռչուններին։ Վառվեցին նրա աչքերը, չե, «կա»։ Հավաքեց

* Սովիկ—վրայի զգեստ, դրսից և ներսից մորթով պատած։

** Փոքրիկ, թեթև առագաստանով։



Կաշաղակն իր ամբողջ քափով խրեց փայտ յերկու աչի արանիք։

կաշվե փոկը, փորձեց բազորը, վերցրեց ծուռ փայտը, պատրաստ-
վեց, սպասում է, մինչև վոր սառույցները հուպ կմոտենան ափին:

Սթափվեց. տեսնում է՝ որը բոլորովին վերջանում է: Յերկար
չի մնա նա այդ հեռավոր ափին: Հազիվ դուրս է նայում արևը
մշուշի յետևից և նորից ծածկվում է այնտեղ:

Պատռված մշուշի միջով դուրս սահեց անկենդան ճառագայթը,
վառեց ձյան փաթիլներում ծիածանի գույներով բյուրավոր պեծիկ-
ներ, անդրադարձավ տորոսի՝ լողացող սառցակույտի մեջ և մի
ակնթարթ ազոտ լուսավորեց խուլ-շառաչող սառցոտ ծովը. լուսա-
վորեց անհյուրընկալ տխուր սավան հագած ափը. լուսավորեց նաև
ափի յերկարությամբ ցրված հարյուրավոր մարդկային կերպա-
րանքները:

Պեծին տվող ձյան կույտերի վրա մուգ բծերով յերևացին
ձկնորսարանի մրոտ, մուխը կերած խճիթները: Նորից աղմկեց
քամին, վրա վազեց և մշուշով միանգամից ծածկեց մարող արևը:

Վերջալույսի անկենդան, վհատ մութը փովեց, ծավալվեց,
ծածկեց ծովի յերեսը:

III

Սառցադաշտերն, իրար հրելով, ափ հասան: Դղրդոցն ընկավ.
ճաքճաքովո՞ղ սառույցների վշտոց, թշտոց, ճարձատյուն: Սառցի կտոր-
ները տրա՞ք, տրա՞ք, դառնում եյին սպիտակ փոշի, սողում եյին
դեպի ափ, տձև կիտվում եյին իրար վրա: Բարակ սառցե փոշին
բշում էր քամին:

Հենց վոր սառույցը մոտեցավ ափին՝ մի քանի հարյուր ձկնա-
վաճառներ հարձակվեցին նրա վրա:

Կաշադակը սառցի վրա առաջին իջնողներից մեկը յեղավ:
Թռչկոտելով մի սառցից մյուս սառույցը, սայթաքելով, մինչև գոտին
թաղվելով քամուց կիտած ձյան մեջ, նա առաջ էր վազում: Սառույցի
կտորները դղրդոցով թափվում եյին նրա յետևից: Լարված միտքը
լարի պես գոգում էր, թե ինչպես տեղ հասնի: Սառցի փշրանքները
ցալքոններով թռչում եյին: Քամին շառաչում էր ականջներում
և խփում յերեսին սառցե ասեղները, հագցնելով միրուքին և բեխե-



Անհարք, ճափճափ մակերեվոյքի վրայով վեց-յուք փութ
քնո ասկեղը հեշտ յեր:

ըին սպիտակ յեղյամ: Բայց նա վոչինչ չէր նկատում և դարձյալ առաջ էր վազում: Ափը անորոշ ուրվագծերով կորավ խավարում: Նա մի րոպե կանգ առավ և, շունչն իրեն քաշած, ականջ դրեց: Շուրջը դատարկ է. փչում է քամին: Անասհման սառցադաշտը կորավ խավարում: Նա վազեց յերկու վերստաշափ, սկսեց հոգնել.

— Չհասնեմ... ձեռքիցս դուրս կգա, — հուսահատ մտածում էր նա, — բայց պետք է վերադառնալ, ջրերը կերթան:

Այն միտքը, վոր ինքը դատարկաձեռն է վերադառնալու, նրան սարսափեցնում էր, մարմնովը դող էր անցնում: Ծխոտ - մխոտ խրճիթ, ընտանիք, կին, յերեխա: Նա ականջը դրեց սառցին, աջ կողմից յեկած ձայները չափազանց նման էին մանկան լացի: Իսկույն անցավ հոգնածությունը: Նա վազեց դեպի մյուս կողմը, թռավ ճեղքի վրայից և, քրտնքի մեջ կորած, վերջապես վորոշեց արագ թանձրացող խավարում անորոշ մթին սառցի կտորներ: Այնտեղ էր ծովաշների մի ամբողջ ընտանիք: Ահագին անձոռնի գազանները անշարժ պառկած էին սառցի վրա: Լսելով մարդու գալը՝ նրանք իրար խառնվեցին և, հենվելով յետի թաթերին, բարձր պահելով հրեշային գլուխները, իրենց անձոռնի ծանր մարմինները քաշ տվին դեպի ճեղքվածքը, վորտեղ տատանվում էր ջուրը և վորտեղ նրանց փրկությունն էր:

Կաշաղակն իր ամբողջ թափով խրեց փայտը յերկու աչքի արանքը: Գազանը գլուխը տվեց, սառցին: Ողում սուլեց բազորը. սուր յերկաթը մինչև կեռին հասնելը մտավ գազանի քթոսկրի մեջ: Տաք արյան կաթիլները շող յեկան յերեսովը և ահագին գազանը, վորին մի այլ տեղ գնդակն էլ չի վնասում, անշարժ մեկնվեց սառցին: Աջիկ հարվածներով կաշաղակը մնացածներին էլ նույն ուրին հասցրեց:

Հուզմունքից և հոգնածությունից դողացող ձեռքերով նա մաշկեց սպանված գազանների մորթիերը և հանեց ճարպերը շերտ-շերտ: Քերթում է մորթիները, շտապում է և հետն էլ հաշվում է, թե վորքան ոգուտ կունենա: Թեթևացած՝ ուրախ ծիծաղում է քթի տակին: Յեթե ամեն անգամ այսպես հաջող գնա, միանգամից վոտի կկանգնի տնտեսությունը:

Բայց ժամանակը չի սպասում, վազում է: Այն էլ կա, սկսվում է տեղատվությունը: Շտապեց կաշաղակը, հավաքեց մորթիները և ճարպը, բեռը կապեց կաշվե փոկով, փոկի ծայրը գցեց ուսին և բեռը քաշեց սառցի վրայով: Անհարթ, ճաքճաքած մակերևութի վրայով վեց-յոթ փութ բեռ տանելը հեշտ չէր:

Մութ և խուլ գիշեր: Յուրա խավարը սողում էր ամեն կողմից, ավելի խիտ պատում էր անապատ տափաստանը, վորտեղ քամին էր վազում, աղմկում սառցի կտորների ֆարանքներից:

Կաշաղակը գնում էր «յա-բախտ»: Նա առաջնորդվում էր քամով և այն նշաններով, վորոնք միայն ափաբնակ մարդկանց են ծանոթ: Նա լարված նայում էր շրջապատող խավարի մեջ, յերբեմն գետին խրելով ձեռքի բազորը: Քրտինքը կաթիլ-կաթիլ թափվում էր յերեսից, բայց ինքը հոգնածություն չէր զգում—հո գատնիկ չի վերադառնում, միայն թե տեղ հասնի:

— Միայն թե քամին յերեք-չորս ուր այդպես փչի ծովից և քշի սառույցները դեպի ափը. ինչ լավ կլինի...

Յեվ նորից կաշաղակը թեթև զգաց իրեն և ուրախացավ:

— Ե, լավ, — շարունակեց նա տալ ու առնել, — հիմա ունի կենդանին գնեմ, Մկոյի զամբիկը* թե՞ Պոտոսի յաբուռն**, Ասում են, վոր Մկոյի զամբիկի վոտները սև ջուր է իջել: Վոչ, Պոտոսինը կառնեմ. չե՞ վոր յաբուռն լավ բեռնակիր ձի յե:

Բեռնակրությամբ պարապելը կաշաղակի համար մի յերազ էր. միայն թե չէր կարողանում ձի առնել, թեև շատ պարզ էր, վոր կաշաղակի ամբողջ վորսը գնալու յե Ագուավին պարտքի տեղ: Բայց կաշաղակին այնպես էր թվում, թե կարող է պատահել, վոր մի բան մնար յաբուռն առնելու համար: Կաշաղակն սկսեց մտածել յաբուռի, բեռնակրության, ձմրան ճանապարհի մասին:

Յերամ-յերամ վազող պատկերները կտրատվեցին: Նա կանգ առավ, սառած թաթմանով սրբեց յերեսից գլորվող քրտինքը:

— Այս ինչ է, ափը չկա ու չկա:

Խուլ գիշերը մռայլ նայում էր նրան: Նա ցավ զգաց.

* Զամբիկ—եզ ձի:

** Յաբուռ—բեռնակիր վորձ ձի:



— Ե-հ, մի ժառանգակ վորքան մարդ և ապրելիս յեղել աշն մեկնասանում,—ծանր ու բարակ սկսեց իր պատմությունը ծերուկը։

— Ուֆ, չլինի ուշանամ. վաղուց ես ասիից հեռացել եմ.— փոկը մի ուսից գցեց մյուս ուսը, և ավելի արագ քաշեց բեռը: Ինքն իրեն ուտում եւ: Ուշացավ. տեղաավություն կլինի, ջուրը յետ կգա, նրան կտանի ծովը: Կաշաղակը դուռ եր տալիս լարված փոկին. ուժից, թափից ընկել ե, զգում ե, վոր ժամանակն անց ե կացրել: Ծնկները ծալվում են: Սկսել ե քնթահարել: Առաջը՝ խավարի միջից կարծես ցուլում ելին տեղ-տեղ կրակներ: Արդյոք ասիւր մոտ ե:

Կաշաղակը բոլորովին ուժասպառ ե լինում: Ծնչում ե դժվար: Քնեքակները խփում են: Չորացած ողն այրում, խանձում ե նրա բուկը:

Ուզում ե գոնե մի բոսիկ կանգ առնի, ջանք ե թափում և, հանդիպելով ցուրտ ձյունին, ել ավելի շատ ե թուլանում:

Տիրեց մի տարրորինակ խաղաղություն: Սառույցը ասի գալուց դադարեց, սկսվեց տեղաավությունը:

— Թողնեմ բեռը, վազեմ, — փայլեց նրա գլխում: Բայց նա չթողեց, այլ ահռելի ուժ գործ դրեց, քաշելով բեռը, վազեց:

IV

Խոր ձյունով լցված ձկնորսարան - խրճիթը սեին ե տալիս: Նրա ճեղքերից դուրս են գալիս ծխի քուլաները: Քամին նրանց իսկույն թռցնում ե:

Խրճիթի ներսը մութն ե. անկյունում վառվում ե ոջախը. կրակի թրթռուն ալ բոցերը լուսավորում են սև, գերանակապ պատերը առանց լուսամուտների, մրոտ, հարթ կտուրը, մրից կախված թավամազ ծոփերը և պատերի տակ յերկարացրած նառեթը: Ողում շերտ-շերտ կախված ե աչք կսկծացնող մուխը:

Նառերին պառկած են ձկնավաճառները, 20 հոգի: Դրանք այն մի քանի հարյուր հոգուց բաղկացած բանակից են, վորին կարիքն ե ուղարկում ամեն տարի Սալիտակ ծովի անմարդաբնակ ասիւր:

Ժամանակն անցնում ե դանդաղ և ձանձրալի: Հարազատ ծովը վատ խաղ խաղաց. մի քանի ժամ ծածկվեց սառույցներով, քիչ վորս չբերին ասիւրը, բայց տեղատվության ժամանակ յեղանակը փոխվեց, ջարդեց, փշրեց սառույցները և անձոռնի բեկորները

շարտեց հարյուրավոր վերստեր: Պիտի կարճացնել բեռային յերկար գիշերները, միակերպ ձմրան որերը, իսկ միակ գվարձությունը՝ թուլութունը և յերգը՝ անպայման վերացված ե:

— Ծովը մաքրություն ե սիրում, — ասում են ձկան գործով պարապողները:— Թութունով ու յերգով և ել պիղծ խոսքերով վոչինչ չես հանի ծովից, հանկարծ ասի քամին կիջնի, մորթիները կխլի և քեզ ել խորը կքշի:

Անկյունում կարմիր խարույկի շուրջը, վոր արձակել ե խիժի հոտոտ ծուխ, նստած ու պառկած են առևտրականները: Նրանք կարճում են ձանձրալի ժամանակը, լսելով հեքիաթներ և յեղեղություններ:

— Եհ, մի ժամանակ վորքան մարդ ե ապրելիս յեղել այս մենաստանում, — սկսեց ծերուկը: Հին հավատն են պաշտպանել: Ռուսաստանի ամեն կողմերից այստեղ են հավաքվել ամեն տեսակ գրքեր հետները:

Ահա այս մենաստանում, վոր Կուլայումն ե, կա այսպիսի մի հին գիրք, անունը «Պաղաղության շրջան». նմանը չկա ամբողջ աշխարհում: Մինչև հիմա վոչ վոր չեր իմացել, թե ինչ ե գրած մեջը: Միայն ճարվեց մեկը, վոր սևը ճերմակից ջուկեց, կարդաց այդ գիրքը: Յեվ ով եր, ինչ եք կարծում, այդ մարդը: Կաղլիկ Իգնատը: Նա գրագիր եր, բայց շատ անպետքը, վոռտեցին. շատ խմող եր: Ե, որվան մի որ գալիս ե այս մենաստանը, աղերսում ե, սոված ե լինում: Մենակյացները չեն ընդունում. «Դու վորտեղից բուռար, — ասում են, — մի բերան ել ավելացնենք, կաղ մարդուն ի՞նչ գործի դնենք: Գնա բանիդ»: Ե, նա յել լալիս ե. «Սովածությունից, — ասում ե, — մեռնում եմ, եսպես միք թողնի, առաքինի մարդիկ. յես կաղ եմ, բայց գրոց աշակերտ եմ. ամեն տեսակ գրքեր, որինակ, կարող եմ բացատրել — և՛ հոգևոր, և՛ մարմնավոր, մանավանդ հոգեփրկիչ գրքեր: Ինչ գիրք ուզում եք՝ տվեք»: Տվին նրան հենց այդ «Պաղաղության շրջանը», վոր այնքան ժամանակ չեյին հասկանում թե ինչ ե գրած այդ գրքում: Իգնատը վերցնում ե գիրքը և կարդում: Յեվ ինչպես ե կարդում, ուղղակի զարմանք բան: Կարդում ե, բայց բան հասկացող չի լինում: Ե, շուռ ե տալիս, այս թերթը, այն թերթը և գիրքը ծալում ե: Նրանք հարցնում են. «Ե, ինչ ե

գրած, գիտնական, այդ գրքում: «Իսկույն,—ասում ե,—բացատրությունը լիովին ձեզ ներկայացնում: Այս գրքում ասված է. ինչպես ե սկսվել աշխարհը, և ինչպես ե գնացել, և ինչպես ե գնալու, և աշխարհի վերջից առաջ վորտեղ պիտի լինեն արյունահեղ պատերազմներ»: Յեվ այդպես ու այդպես, այդպես պարզ, այդպես հասկանալի պատմեց նրանց, հալեց գլուխներն ածեց: Ծերերը կպան նրան. «Դու Ոհան Վոսկեբերանն ես, դու մեզ համար թանկագին մարդ կլինես»: Յեվ մնաց Իգնատը: Յեվ այն որվանից ամեն տարի շատ ժողովուրդ է գալիս այս մենաստանը և նրանց համար կարդում են «Սաղաղության շրջանը»: Հարստացած մենաստանը ամբողջ շրջապատինն էր. դրա համար բոլոր յեկողները նվերներ էյին բերում:

— Բա վճռակցից գիտեն, վոր եդ գրքում գրածը դրուստ ա,— նկատեց մի անբեխ պատանի:

Պատմողը լռեց, հետո մի կողմ թքելով, արհամարհանքով հարցրեց.

— Իսկ դ՞ու վորտեղից ես:

— Յես, հմ. յես Նիժիցն եմ:

— Գիտեմ վոր Նիժեցի պիտի լինիս:

Բոլորը ծիծաղեցին: Պատանին, ամաչելով, հեռացավ:

Խրճիթը խեղդող է և մխոտ: Ողբ թանձր է և ծանր: Լավեց մի կարճատև հարված: Քամին պոկեց դարավոր ծառը:

— Այ թե ինչ է նշանակում. գրագրության համար պետք չեկավ, յեկավ այստեղ իմաստուն դարձավ,— նկատեց մի հարգելի միջուկավոր ծերունի,— այն ել դեռ հարբեցող:

— Ե, վճռակց, յ՞բբ կլինեն այդ վերջին արյունահեղությունները,— հետաքրքրվեց մի ուրիշ պատանի, վոր ամբողջ ժամանակը ուշադիր լսում էր պատմիչին:

— Բայց գրած է այնտեղ, վոր այդ արյունահեղությունները կլինեն մեր յերկրում Կոստանդին թագավորի որոք, և կլինեն այս Սպիտակ ծովի շրջակայքում: Այն ժամանակ կհասնի վերջին ժամը, ովկիանոսից կգան սառույցները, և կվերականգնի ուժը...

Այդ ժամանակ դրսից ծանր քայլերի տակ ճոճապ ձյունը: Դուռը բացվեց. ներս պրծնող քամին որորեց կարմիր բոցը և

խրճիթը լցրեց ծխով: Ներս մտավ մուշտակի մեջ փաթաթված գյուղացին: Յեղյամով ծածկված յերեսը մռայլ նայում էր բաշլղի միջից:

— Կաշաղակը այստեղ չի,— ասավ նա ցածր ձայնով:

Բոլորը միանգամից լռեցին: Ամեն մեկը մտքումն ասում էր. «Յուրա տարածություն, սառույցներ և աստղայից յերկինք, իսկ մարդը ծովում սառցին է տալիս իրեն, սառչում է խեղճը:

— Ի՞նչ էք նստել, գնացե՛ք կարբասի* մոտ:

Ութ մարդ հագան մորթե շապիկները:

Ծերունին դուրս յեկավ և նայեց ծովին, վորի ընդարձակությունը կորչում էր գիշերվա խավարում: Անշարժ նիւնում էր հին անտառը: Ափի յերկարությամբ պահնորդ հսկաների նման բարձրանում են սառցե ժայռերը:

Մի րոպե անց՝ փոքրիկ կարբասը արձակվեց կապանքից և արագ հեռացավ ափից, սառչելով իրեն զիմադրող ալիքներից:

V

Ալիքները տանում էյին կոտրատված, ցիր ու ցան յեղած սառցային դաշտերի մնացորդները, հենց ասես հսկա նավի ջարդված կտորներ լինեյին: Ամպերն այնպես շտապ վազում էյին կապույտ կամարով, զարդարված ցուրտ փայլվաքող աստղերով: Հյուսիսային յերկար գիշերը փռվել էր խուլ կլկլացող ծովի վրա, վորը դեռ ելի բարկանում էր անցած փոթորկի վրա:

Սառույցներից մեկի վրա տեսնվում էր մի ինչ վոր բարձր բանի ուրվագիծ:

Դա Կաշաղակն էր: Նա հմտորեն բանեցնում էր բազորը, և ճկուն ձողը խառնում ու փրփրեցնում էր ցուրտ ջուրը: Անձուռնի սառցի կտորը հանդարտ շարժվում էր: Կաշաղակը բարձրացրեց գլուխը. վերևը՝ ցուրտ գիշերվա գոլորշու միջից փայլում էր Արջ համաստեղության վոսկե կեռը: Նրան նայելով՝ ճամբա յեն վորոշում: Կաշաղակը հենվում է բազորին, առաջ է հրում ծանր սառույցը, իսկ գլխումն ամեն ինչ խառն է. ծովը հեռուն է քշել, սառնամանիք է, գիշեր-ցերեկ բերանը բան չի մտել: Ուժ է տալիս

* Կարբաս—նեղ, փոքրիկ նավ, վոր թիավարելով է գնում:





բազորին, տեսնում ե վոր թուլանում ե: Մի րոպե կանգ առավ, նայեց. ջրային հանդարտված անապատը կապտագույն կիսախավա-
րում անվերջ եր թվում:

Հավաքվեցին վերջին արծաթե ամպերը, և ցուրտ յերկինքը
անվերջ պեծին եր տալիս:

Զգում ե կաշաղակը, վոր վերջը լավ չի լինելու: Աշխատում ե,
ուզում ե տաքանալ աշխատելուց, բայց գլխումը խուռն յերամով
վազում են խառն մտքեր. «Դուրս հանիր, յերեխեքը փոքր են,
անգիտակից»: Շարունակ միևնույն բանն ե միտքը գալիս. ձկնոր-
սություն արավ, վոտքի կկանգներ և Ագուսին ել մի մասը կտար,
բայց արդյոք յե՞տ կգնա: Հիշեց խրճիթը՝ մութ և ծուխ: Լինում եր,
վոր կաշաղակը, գործից վերադառնալիս, լողանում եր բաղնիսում,
տաքացնում մեղավոր մարմինը: Հիշում եր թե ինչպես յերեխա
ժամանակը հոր հետ գնում եր ձկնորսության: Շուրջը աղմկում եր
ծովի ալեկոծությունը, և գալիս եյին սառցի սարերը: Նա ճահիճների
շավիղներն եր հիշում, — հիշում եր թռչուններին, անտառի գազան-
ներին, վոր վորսում եր: Նա իր աղքատությունը հիշեց և հենց այդ
բոլորը հիշելուց, շատ դժվարն եր գալիս: Զուրը տվեց բազորին և
մտքով չափեց այն տարածությունը, վոր պիտի անցներ:

— Ախ, չեմ հասնի, միթե յես կորա, — ասում եր կաշաղակը:

Յե՛վ չի հավատում: Նա շատ, շատ ե գնացել ծով: Շաբաթնե-
րով, ամիսներով ապրել ե այնտեղ: Զորս բոլորը ծով, սառույցներ
և յերկինք: Պատահել ե, վոր հեռու յե տարվել. անհաց, անկրակ,
անոգնական, կյանքը մազից կախված ե յեղել, բայց ելի դուրս
ե յեկել:

Կաշաղակը գործադրում ե իր վերջին ուժերը, թույլ ծովում ե
յերկար ձողը. քարացան ձեռքերը, ծնկները ծալվում են, կախվում
ե ծանրացած գլուխը: Ուզում ե նա գոնե մի րոպե նստել, բայց
լավ գիտի, վոր սառնամանիքը աշալուրջ հետևում ե. հենց վոր մի
րոպե կանգնես շունչ քաշելու, նա մեջ կառնի, ներս կթափանցի:
Կաշաղակը կռվում ե քնի հետ: Մտքերը խառնվել են, ընդհատվել,
պոկվել են իրարից և պատառ-պատառ ցրիվ են գալիս, ինչպես
անկյանք մշուշի փաթիլները քամու առաջ: Կաշաղակը հասկացավ,



...փոքրիկ կարասը արձակվեց կապակից յե՛վ արագ նկուցավ ափից...

վոր իր վերջն ե: Կրկին զարթնեցին նրա մրսող ուղեղում հեռավոր հարազատ պատկերներ: Վե՛հ, վո՛չ վոք չի ոգնի, չի տեսնի, չի լսի, մենակ ե նա ծովում: Յե՛վ նա վայրենի կերպով՝ բղավեց.

— Յեղբայրներ, կորչում եմ...

Շուրջն ամեն ինչ վառվում եր: Մի կողմից՝ պայծառ վառվում եր յերկինքը, մյուս կողմից՝ հանգան բոլոր աստղերը. չարագուշակ խավարը մռայլ նայում եր, բռնած կես յերկնակամարը: Ասես մի հսկայական հրաբուխի բերանից կծիկ-կծիկ դուրս ելին գալիս ծխի սպիտակ քուլաները, բացվում ելին քողի պես և տարածվում յերկրնքով մեկ: Յե՛վ ամեն անգամ, յերբ բորբոքվում եր այդ ծխող քողը, այնպես եր թվում՝ թե այս ե կլսվի խլացուցիչ հարվածը և քնած ծովը կթնդա: Բայց անշարժ գիշերային ողում ախրում եր դարձյալ նույն լուռ հանգիստը: Միայն յերկնքում բոցավառվում ելին կրակի շերտեր և արագ ցրվում, տալով ծխածանի գույներ:

Մի հաճելի հանգիստ դրության մեջ ընկավ Կաչաղակը: Նա չեր մտածում այն մասին, թե վորտեղ ե գտնվում: «Այ, սառնամանիքն ինձանից ձեռք քաշեց»: Քունը շշմեցրեց նրա գլուխը և մի տեսակ մոռացության մեջ գցեց:


Հանկարծ նա վեր թռավ. լավեց մի յերկարատև հարված, ասես՝ թնդանոթներ արձակեցին: Հեռուն սառնամանիքը սաստիկ հուպ տվեց և ճաքեցրեց ահագին սառցի կտորը: Նրա տված արձագանքը ծովով մեկ յեղավ:

Մի բոպե Կաչաղակը զարթնեց, մեծ դժվարությամբ բանալով աչքերը: Յե՛վ մշուշի միջով տեսնում ե, վոր ուղղակի իր վրա յե գալիս, ջուրը կտրելով, կարբասը:

Վազում ե կարբասը, սավեր գցելով ջրերին, իսկ նրա հետևից, ծծմբային փայլ արձակելով, ոճի նման գալարվելով, վազեցին յերկու պայծառ ալիք: Կաչաղակը ձայն տալ ե ուզում և չի կարողանում: Կարբասը կպավ սառցի կտորին: Սառցի կտորը վեր թռավ, շարժվեց և իրար տվեց ջրի յերեսը. իրար յետևից վազ տվին, չքճան կազմելով, ալիքները: Արտացոլող աստղերը դողդողացին, ցատկոտեցին, չքացան: Միայն հենց նոր յերևացող լուսինը անձուռնի ձգվեց, յերեբաց և արծաթափայլ փովեց հորիզոնում:



Յե՛վ նա բղավեց.—Յեղբայրներ, կորչում եմ...



Կաշադակը իր համար անհկատելի կերպով ընկավ նավակի մեջ։ Թիակները ծփծփացին և մենավոր սառույցն ընկղմվեց ցուրտ տարածության մեջ։ Ծովի յերեսին իջավ մեզ-մշուշը և ամեն ինչ ծածկեց։

Փայլելով հյուսիսի վսեմ գեղեցկությամբ՝ հանգիստ նիրհում է հանդարտ ծովի վրա բեռային գիշերը, վոր հյուսել է ցուրտը նուրբ պեծավոր մշուշից։ Իսկ նրա վրա տարրերինակ գույներով փայլ երարձակում լայն փռած աստղերի հյուսվածքը և խառնում եր վոսկի ցուրերը սառնամանիքի արծաթ ծխին ու կորցնում մթին անդունդում անշարժ կանգնած պայծառ աստղերը։ Բարձրից մտահոգ թափում է իր կապտավուն փայլը գունատ լուսատուն, վորի պայծառ գիսկը արագցույում է ցուրտ խորության մեջ, վորքը պսակված է սառնամանիքի ծխածանազույն լույսով։

Մեռելային լուսթյունը անշարժ կախված եր սառած ծովի վրա, և այդ գեղեցկության մեջ յերևում եր հավիտենական մահի կենսագուրդ ցուրտը։ Մեղմ կապտավուն շողը լուսավորում եր բարակ սառցե շերտով ծածկված ջրային անսահման հարթությունը և նույնպես մենավոր սառցակտորի վրա անշարժ կծկված կերպարանքը, վոր ծածկված եր ասեղնավոր յեղյամով։

* * *

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

— ՀԱՅԿԱՅԱՆ ՄԵԿՑԻԱ —
Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10

Լ Ո Ւ Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

	Գ ի ն ը
ՂԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄԵՐԸ ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ	15 կ.
ՂԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄԵՐԸ ԺՈՂ.ԼՈՒՍ. ՄԱՍԻՆ. Կազմեց Ն. Կրուպսկայա	20 կ.
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻՆ և ԲԱՆ. - ԳՅՈՒՂ. ԴԱՇԻՆՔԸ, - Ն. Բուխարին	1 ր. 25 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ, - Ի. Ստալին	50 կ.
Ա.ԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ, - Ի. Ստալին (272 էջ)	1 ր. 50 կ.
ՀԱՄ. ԿՈՄՈՒՆԻՍՏ. ԿՈՒՍԱԿ. (Բ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Վ. Վոլոսկի	1 ր. 50 կ.
ՊԱՅՔԱՐԻ ՅԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՍԸ ՏԱՐԻ	70 կ.
1905 թ. ՄԵՐ 1 ԲԱՆ. - ԳՅՈՒՂ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, Ի. Ֆլերովսկի	70 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. Ելիզարով	30 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XV ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ. - Գ. Ռեկլին	20 կ.
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ 1905-ին, - Ա. Կարենյան	70 կ.
ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱՐՈՒՄԻ ԴՆԵՐԸ, - Զ. Լավրենսյան	30 կ.
ԽՍՀՄ ՅԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԸ, - Ա. Արշարունի	30 կ.
«Ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.) Կազմեց Ի. Վ. Տովստուխա	7 կ.
ԿԼԱՐԱ ՑԵՏԻՆ (կենսագր.), - Կազմեց Զ. Բոյարսկայա	15 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (Կոմս. հմր.) ըստ Վերգանսկու, պրակ I,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " պրակ II,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " պրակ III	50 կ.
ՀՈԿՏԵՄԲԵՐ	10 կ.
ՊԱՏԵՐԱԶՄ ԶԵՆՔ ՈՒՋՈՒՄ, ԲԱՅՑ ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ԴԻՄԱԴՐԵԼՈՒ	10 կ.
ԻՆՉՈՎ Ե ՈՒՃԵՂ ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԸ	15 կ.
ՄԱՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ, - Դ. Ադու	35 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋԱՑ. և ԶԱՐԳ. ԿՅԱՆՔԸ ՑԵՐԿՐԻ ՎՐԱ, - Գրեմյակի	50 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ՍԱՐՔՎԱԾ ՏԻՅԵԶԵՐՔԸ, - ակադեմիկոս Դ. Դրավե	50 կ.
ՎՈՐՈՏ, ԿԱՑԾԱԿ և ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, - Մ. Գրեմյակի	40 կ.
ԱՐԵՎԸ, ՆՐԱ ՎՈՐԴԻՆԵՐԸ և ԹՈՌԵՆԵՐԸ, - Բ. Սեմեյկին	40 կ.
ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԵՐԸ.	15 կ.
ՄԱՐԿԱՅԻՆ ԲԱՆԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, - Վ. Յազվեցկի	15 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՑԵ ԳՅՈՒՂ. ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹ. ԱՆՑԿԱՑՆԵԼ	20 կ.
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ, - Վ. Դմիտրյևա	15 կ.
ԳԵՂ ԿԱՆԳՆԻ ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ (կոոպերացիան գյուղում), Լ. Ի.	30 կ.
ԱՍՏՑՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՑ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, - Դ. Պ.	20 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹ. ԱՅԲՈՒԲԵՆԸ	30 կ.
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՑԵՐԱՇՏԻ ԺԱՄԱՆԱԿ, - Պ. Վլասով,	40 կ.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ, - Մ. Լիվինսկի	20 կ.
ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆԻՆ, Ա. Սկոմորոսով	17 կ.
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ	17 կ.
ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱՐԱՍԱՌՍ ԿՈՎ, - Բ. Սկոմորոսով	12 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄ. ՍՏԻՊԵՑ, ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ Զ ԱՆԳԱՄ ԾԵՆԻ.	15 կ.

ԽՈՋԸ ԳՅՈՒՂԱՅՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե,—Ե. Լիւսաչե	18 կ.
ՄՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ,—Գ. Սպեքանսկի	16 կ.
ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,—Բ. Գինսբուրգ	30 կ.
ԳՅՈՒՂԱՅ. ՊԱՆԱՋՆԵՐԸ և ԽՈՐՀՐԴ. ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐՆԵՐԸ	12 կ.
ԴԵՂՋԿՈՒՀԻՆ և ՅԵՐԵՆԱՆԵՐԸ	25 կ.
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ (ռուսացի չինեզի համար)	70 կ.
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ Ի ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՑՈՒՄ, Բ. Ժավորոնսկով	65 կ.
ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ և ԴՊՐՈՑԸ	40 կ.
ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ (ժողովածու)	60 կ.
ՊԻՈՆԵՐ, ՊԱՆԱՋՆԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԴ,—ՅԵ. Ռադին	10 կ.
ՊԻՈՆԵՐ, ՀԵՏԵՎԻՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՆ	15 կ.
ԼԻՆԵՆԻ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ,—Ն. Ֆայլինսկ. մաս I,	40 կ.
ԼԻՆԵՆԻ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ » մաս II,	45 կ.
ԲՈՍ, ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵՂ ՆՐԱ ԴԵՄ,—ԲԺ. Նադեյժին	20 կ.
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱՊՏԵՐ,—Վ. Բրոնսկ	25 կ.
ՄԵՐ ԱՎԱԳ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ—ԿՈՍՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ	20 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՔՈՆ ԿԱՐՄԻՐ—ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱՎ—Կրավչենկո	35 կ.
ԿԱՐՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ,—Պ. Խլեբնիկով	45 կ.
ՅԵՐԿՐԻ ԽՈՐԲԵՐՈՒՄ,—Ա. Կուպրին (նկարազարդ)	18 կ.
ԲԻՄԻԿՈՍ ԿՈՒՋԿԱՆ,—Պ. Ուլովեց (նկարազարդ)	28 կ.
ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊՈՂԱՆՈՎ,—Պ. Ուլովեց (նկարազարդ)	22 կ.
ՄՈՐԱԿԻ և ԱՐՋԻ ՄԱՍԻՆ (հեքիաթ)—Դ. Մամին-Սիբիրյակ (նկար.)	15 կ.
ԻՆՉՊԵՍ ԵՑԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿԻՆԿՆԵՐԸ (նկարազարդ)	16 կ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ,—Ֆր. Ֆոկս (նկարազարդ)	18 կ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ,—Եդմոնդո դ'Ամիլիս (նկարազարդ)	12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ,—Ուլյա (նկարազարդ)	12 կ.
ԹՈՋՈՒՆՆԵՐ (գունատիկ ալբոմ յերեխաների համար)	25 կ.
Հ. ՊԱՐՈՆՅԱՆ (ընտիր յերկեր), պրակ I	40 կ.
» » » պրակ II	35 կ.
» » » պրակ III	35 կ.
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԴՐՈՂԸ: ՄԱՐԴԸ,—Մաքսիմ Գորկի	15 կ.
ՊԱՏՄՎԱԾԲՆԵՐ,—Ա. Սերաֆիմովիչ	45 կ.
ՄՐԻԿԱՀԱՎԸ և ՈՒՐԻՇ ՊԱՏՄՎԱԾԲՆԵՐ,—Մաքսիմ Գորկի	10 կ.
ՅԵՐԿՐԱՇԱՐԺ (պատմվածք)	25 կ.
ԱՐՏԱՍՈՎՈՐԸ,—Մաքսիմ Գորկի	40 կ.
ԿԱՆԴԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ,—Ն. Լյաշկո	20 կ.
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԱՏՄՎԱԾԲ,—Ս. Յակովլև	20 կ.
ԸՆԿ. ՎԱՆԻՍ,—Մ. Յուրին	15 կ.
ՁԱՊԱՅԵՎ,—Դ. Ֆուրմանով	50 կ.
ՁԱՊԱՅՊԱՆ ՈՏՈՊԱՅ,—Ա. Ֆուրով	20 կ.
ԴԱՅԻՆԸ,—Ֆ. Գլադկով	25 կ.
ՄԱՅՐԸ,—Ֆ. Բերեզովսկի	45 կ.
ՄԵԾ ՏԱՄԱՍՅԱՆԸ՝ ՆԿԱՐԸ և ԲԱՆԴԱԿ. մեջ (ալբոմ)	50 կ.
ԻՆՉ ՏՎԵՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ	20 կ.
ՅԵՐԵԿ ԻՅՏԵՐՆԱՅԻՈՆԱ	1 ս.
ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1917	85 կ.
ՁՈՐԱՑՈՂ ԹԵՎԵՐ	



«Ազգային գրադարան»



NL0311775

25 400.

704

437

5049

17522

1
2



А. Серафимович
НА ЛЬДИНЕ

На армянском языке.

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СОЮЗА ССР
Москва, центр, Никольская, 10